

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

քաղաքացիների ընդունելության և դիմումների, բողոքների ու

առաջարկությունների վերաբերյալ

09.04.2015թ. դրությամբ

1. Ստացվել են դիմումներ ընդամենը՝ **7103**
որից՝

	ԹՎԱՔԱՆԿԸ	% ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ
առաջարկություն	22	0.3
դիմում	5789	81.5
բողոք	1292	19.1
կրկնակի	412	5.8
կոլեկտիվ	20	0.2

2. Վերցված է վերահսկողության ընդամենը՝ **1220**

	ԹՎԱՔԱՆԿԸ	% ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ
դիմում	820	11.5
բողոք	400	5.6

3. Ըստ հարցերի բնույթի

	ԹՎԱՔԱՆԿԸ	% ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ
բնակարանային	78	1.2
կոմունալ-կենցաղային	3	0.04
շինարարական	12	0.2
արդձեռ (տրանսկապ)		
գյուղատնտեսական	5	0.07
բնութ. պահպանութ.		
առևտրի		
կենսաթոշակային	430	6.1
առողջապահության	35	0.4
կրթական և մանկ. հիմն.		
գիտութ. կուլտուրա		
ֆինանսական	560	7.8
օրենսդրական	46	0.6
քաղ. և որդեգրման հաշվառման		
աշխ. և աշխատավարձի	254	3.5
ապարատային		
այլ հարցեր	5675	79.8
սեփականաշնորհում	5	0.07

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

2015Թ. ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՐԱՆՑ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ, ԲՈՂՈՔՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ստացված 7103 նամակներից մոտ 0.3%-ը եղել են առաջարկություններ, 7.8% հիմնականում վերաբերել են ֆինանսական հարցերին: Բողոքները կազմել են շուրջ 19.1%, որոնցով հիմնականում վիճարկվել են դատական ակտեր: Միաժամանակ, դրանց մի մասը բովանդակել է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդություն:

Նշված նամակներից մոտ 81.5%-ը տարաբնույթ հարցերով դիմումներ են, որոնց գերակշռող մասը՝ մոտ առնչվում է ֆինանսական հարցերին, մոտ 3.5%-ն աշխատանքի և աշխատավարձի հարցերին: Ընդ որում՝ ֆինանսական հարցերին վերաբերող դիմումները ստորաբաժանվում են՝

- դիմումատուների կողմից դատարան ներկայացրած գումարների պահանջների վերաբերյալ դիմումներ (որոնք հիմնական մասն են կազմում).
- դատարան դիմելիս պետական տուրքի վճարումից ազատելու վերաբերյալ դիմումներ:

Դիմումատուները դատական ակտի հետ չհամաձայնվելով, իրենց դիմումները հղել են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանը՝ խնդրելով աջակցել իրենց դատարանում ներկայացրած պահանջների վերաբերյալ արդար դատական ակտ կայացնելու կամ պետական տուրքից ազատելու հարցերով: Դիմումներին պատասխանվել է, որ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը նման հարցերին միջամտելու, ինչպես նաև վարչական կարգով պետական տուրքից ազատելու իրավասությամբ օժտված չէ, որ նման վեճերի քննարկման իրավասությունն օրենքով վերապահված է դատարաններին: Դիմումների որոշ մասը՝ 1.2%-ը առնչվում է բնակարանային, 0.04%-ը կոմունալ-կենցաղային, 0.2%-ը շինարարական, հողային վեճերի վերաբերյալ հարցերին:

Իսկ մնացած՝ մոտ 79.8% դիմումները վերաբերում են տարբեր ոլորտներին առնչվող խնդիրներին, որոնց կապակցությամբ ուղարկվել են օրենքով սահմանված սպառիչ պատասխաններ ու տրվել պարզաբանումներ:

Հայտնվում է, որ ստացված դիմումներից 6973-ին տրվել է գրավոր: Ամփոփումների արդյունքներով տեղեկանքը կազմելու պահին 130-ի քննարկումը դեռ ընթացքի մեջ է:

